

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ (ՏՐԱՆՍԼԻՏԵՐԱՑԻԱ)
ԵՎ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ
ԷԴՄՈՆԴ ՇՅՈՒՑ (Բուդապեշտ)

1. Լեզվաբանները (հնագետներ, հնդեվրոպական լեզուների մասնագետներ) հետևողականորեն կիրառում են Հյուբշման—Մեյե—Բենվենիստ (ՀՄԲ) պրագմատիկական համակարգը, քանի որ այն ճշգրտորեն արտացոլում է V դարի հայերենի հնչյունային համակարգը:

2. Ինչպես հնդեվրոպական լեզուների, այնպես էլ հայերենի մասնագետները պաշտպանում են գրագրություն հիշյալ համակարգը և գտնում են, որ այն պիտանի է բոլոր տեսակի գիտական տեքստերի համար: Այս մեթոդը սկզբունքորեն ընդունվել է հասարակական գիտությունների գիտնականների մեծ մասի կողմից:

Այս համակարգը կիրառվել է նաև վերջին տասնամյակներում հրապարակված մենագրություններում (թարգմանություններ), ինչպես, օրինակ, Գյուլբենկյան մատենաշարով՝ Ագոնցի «Հայաստանը Հուստինյանի ժամանակաշրջանում» (թարգմ. Ն. Գ. Գարսոյան, որը կատարել է նաև գիտական խմբագրությունը), Ա. Տեր-Ղևոնդյանի «Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում» (թարգմ. Ն. Գ. Գարսոյան): Լորանի դասական մենագրության «Հայաստանը արաբական նվաճումից մինչև 886 թ.» (Լիսաբոն, 1980) ընդլայնված և վերանայված տարբերակում Մ. Կանաուր փորձել է բերնագրի անհամասեռ ուղղագրությունը հարմարեցնել գրագրության այս համակարգին:

2, 1. Մի շարք ծանրակշիռ փաստարկներ արդարացնում են գրագրությունից սույն համակարգի կիրառումը. ա) նրա հնչյունական արժեքը հիմնականում համապատասխանում է սովորական գրական լեզվի արտասանությանը (մայր հայրենիքում՝ մինչև օրս), բ) ուղղահայե ալիստիպիայի հետևողական է և գրագրության պարզ աղյուսակի օգնությամբ կարելի է վերականգնել նախնական վիճակը (վերստին տառադարձել է նույնիսկ ոչ հայագետի կողմից), գ) վերջերս վերահրատարակվող «Revue des études Arméniennes» («Հայագիտական ուսումնասիրություններ») հանդեսը պահանջում է, որ ամսագրում հրատարակվող հոդվածները օգտագործեն տառադարձման նշված համակարգը:

2, 2. Այնուամենայնիվ, հեղինակներն ու թարգմանիչները ստիպված էին խոստովանել, որ հնարավոր չէ հասնել բացարձակ միօրինակության: Արաբական (մահմեդական) անունների և տերմինների համար գիտնականների մեծ մասը որդեգրել է «Իսլամի հանրագիտարանի» ուղղագրությունը, իսկ պարսկերենի համար՝ Քրիստենսենի «Իրանը Սասանյանների օրոք» դասական աշխատության մեջ կիրառված ուղղագրությունը: Այսպիսի մոտեցում է ցուցաբերել Ն. Գ. Գարսոյանը՝ Տեր-Ղևոնդյանի և Ագոնցի մենագրությունների թարգմանիչը: Շատ ավելի բարդ էր նույնիսկ մոտավոր միասնական սկզբունքի պահանջումը Մանանդյանի «Հայաստանի առևտուրն ու քաղաքները հին աշխարհի առևտրի հարաբերակցությամբ» (Լիսաբոն, 1965) մենագրության թարգմանության մեջ, որտեղ առկա գրագրության ոչ միասնական ղեկավարող պայմանավորված և օգտագործված բազմաբնույթ աղբյուրների ուղղագրություններ: Խնդիրը բարդացել էր նրանով, որ Հ. Մանանդյանը ընդգրկել է մի մեծ ժամանակահատված՝ դասական շրջանից մինչև կիլիկյան միջին հայերենը: Այլ կերպ ասած՝ տարբեր տառադարձություններ ունեցող աղբյուրներ:

կիրառումը, որոնց մի մասում օգտագործվել են տառակապակցություններ, հանգեցրել է գրադարձության հետևողական և միասնական սկզբունքի խախտմանը:

3. Այս իսկ պատճառով մի շարք հեղինակներ բացահայտորեն ընդունեցին այդ համակարգերի երկիմաստությունը նույնիսկ հայերենի համար: Իր «Կովկասի քրիստոնեական ժողովուրդների պատմության ուսումնասիրություններ» (Վաշինգտոն, 1963) աշխատության մեջ Թումանովը գործածում է երկու համակարգ՝ հայերենի անձնանունների ու տեղանունների տառադարձման համար. ա) դասական գրադարձություն՝ հայկական մատենագրության և տեխնիկական տեղանունների և հղումների համար, բ) հնչյունական առադարձություն՝ օգտագործելով նաև տառակապակցություններ շաբաղրանքի համար (տե՛ս էջ 27):

Ազաթանգեղոսի երկի վերջերս հրատարակած (Նյու Յորք, 1978) թարգմանության մեջ Ռ. Ու. Թոմսոնը պատմական տեքստերի վերաբերյալ բացահայտորեն արտահայտվել է հատուկ անունների հնչյունական առադարձության օգտին (օգտագործելով նաև տառակապակցություններ). «լրացուցիչ նշանների առատ օգտագործումը... լեզվաբանական պայմանական նշաններին անծանոթ անգլիստոս ընթերցողի համար... անշուշտ շփոթություն կառաջացնեն» (էջ XIX):

Հայերենի «Ոսկեգարի տարեգրություն», Ազաթանգեղոսի և Խորենացու «Պատմությունների» թարգմանություններում Թոմսոնը նվազագույնի է հասցրել լրացուցիչ նշանների օգտագործումը և Մեյն—Հյուբերման—Բենվենիստի համակարգից հանել է այն տառերը, որոնց հնչյունային նշանակությունը տարբերվում է անգլերենին հատուկ գործածությունից:

4. Սակայն ձևական երկրնտրանքի կողքին, այն է՝ գրադարձություն, թե՛ տառադարձություն, երբ այն վերաբերում է հատուկ անուններին և տեղանուններին (լինեն դրանք պատմական կամ լեզվաբանական տեքստերում), հիմնական դրոշմը մնում է պատմականությունը: Անվանացուցակում նոր անուններ են ներմուծվել, իսկ հները ենթարկվել են որոշ փոփոխությունների: Ետդասական շրջանում (Բագրատունիների անկումից հետո) գրված աշխատությունների հիմնական դժվարությունը վերաբերում է դասական (արևելյան) հայերենի և Կիլիկյան (արևմտյան) հայերենի հնչյունային տարբերություններին:

4, 1. Այսպես օրինակ՝ հայ քաղաքական, մշակութային և արվեստի պատմության իր հանրամատչելի գիտական ակնարկներում Սիրաբիի Տեյ-Ներսեսյանը ընդգրկել է նաև միջնադարյան հայ պատմության վերջին փայլուն հատվածը՝ Կիլիկյան թագավորության ժամանակաշրջանը: Քանի որ այդ աշխատությունները գրված էին նաև լայն հասարակության համար, ուստի դրանում հեղինակը կիրառել է գիտական հանրամատչելի տառադարձություն: Սակայն Կիլիկյան Հայաստանի վերաբերյալ գլխում նա ստիպված էր հաշվի առնել գրական լեզուների տառադարձության երկակիությունը: Քայքայի իր մյուս աշխատություններում նա նույն մեթոդը չի կիրառում. մեծ մասամբ գործածում է արևելյան գրական տառադարձությունը: Դա ավելի է հեշտացնում գործը, քանի որ գրական կերպարները, լինելով կղերականության ներկայացուցիչներ, մեծ մասամբ ունեն բիբլիական կամ հունական անուններ, որոնք համընկնում են մայր երկրում օգտագործվող անուններին: Ազնվական դասի անունների մեջ (Ռուբինյան և Հեթումյան տոհմեր) կան մեծ թվով հարևաններից փոխանված անուններ՝ բյուզանդացիներից, խաչակիրներից և մահմեդականներից: Դրանք բնորոշ կիլիկյան անուններ են: Սակայն հնչյունային առումով նրանք տարբերություններ չեն տալիս. օրինակ՝ Մլեհ, Թորոս, Լևոն, Օշին: Ինչ վերաբերում է տեղանուններին, դրանք հին տեղանուններ են, որոնք մայր երկրում իրենց համարժեքը չունեն:

Իր «Հայերը» (Նորիջ, 1969) և «Հայաստանը և Բյուզանդական կայսրությունը» (Հարվարդի համալսարանի հրատարակություն, 1947) գրքերում,

որոնք ընդգրկում են հայերի քաղաքական և մշակութային պատմությունը հին օրերից մինչև Կիլիկիայի թագավորության անկումը, Սիրարփի Տեր-Ներսեսյանը անտեսում է կիլիկյան արտասանությունը:

4, 2. Միայն «Կիլիկյան Հայաստանի թագավորությունը» աշխատության մեջ (որի մի գլուխը հատկացված է «Խաչակրաց արշավանքի պատմությանը» խմբ. Սեստոն և ուրիշներ. Պենսիլվանիայի համալսարանի հրատարակություն, 1962, 2-րդ հատոր) նա գործածում է գիտական հանրամատչելի տառադարձությունը՝ հարմարեցնելով այն կիլիկյան հայերենի հնչյունական առանձնահատկություններին:

5. Նման դժվարություններ շատ ավելի քիչ են առաջանում արվեստի պատմության բնագավառում: Այնուամենայնիվ նույն ձևով անհրաժեշտ է տարբերակել արվեստի և դրականության (արևմտյան և արևելյան) առանձին աշխատությունները:

5, 1. Գիտական աշխատանքները ու մենագրությունները, որոնք գրված են առաջին հերթին մասնագետների համար, գլխավորապես վերաբերում են ճարտարապետական կոթողի, նկարի կամ քանդակի բնույթի և ոճի քննարկմանը: Այս կարգի գիտական գրականությունը հիմնականում կիրառում է դասական գրադարձության համակարգը:

Որպես օրինակ կարելի է նշել «Միջնադարյան հայկական ճարտարապետության ուսումնասիրությունները», որոնք հրատարակվել են Հոռմի համալսարանում: Այս մատենաշարում յուրաքանչյուր հատոր տալիս է մեկ կամ մի քանի եկեղեցիների կամ վանքերի կառուցվածքի նկարագրությունը, որին հանդիպում է տեղանվանական առանձնահատկությունների համեմատական վերլուծությունը: Թեև ճարտարապետական այս կոթողները կանգնեցվել են մեկ հաղաբաշակ կամ շատ դարձի առաջ, այնուամենայնիվ պատմական տվյալները սակավ են և միայն մի քանի հատուկ անուններ են հիշատակվում համապատասխան աղբյուրներում, այնպես որ արևելյան և արևմտյան տառադարձությունների միջև եղած տարբերությունը նշանակություն չունի. զրաբարի տեղանունների ընթերցման տարբերակները բերված են տողատակի ծանոթագրություններում և հիշատակվում են դրանց ժամանակակից թուրքական կամ քրդական անունները:

Դժվարությունները համեմատաբար քիչ են անձնանունների դեպքում. վանքերի բնակիչները մեծ մասամբ բիրիական անուններ ունեն, որոնց գրադարձումը կարելի է կատարել այս կամ այն ձևով:

Դժվարություններ են առաջանում հուշարձանի պատմական դարաշրջանի նկարագրության ժամանակ, երբ այն գտնվում է մի այնպիսի տարածքում, որտեղ ազգային լեզուն եղել է արևմտահայերենը:

5, 2. «Հայկական ճարտարապետության փաստեր» գեղեցիկ պատկերազարդ ալբոմի մատենաշարի առաջին ինը հատորներում կիրառվել է տառադարձության թերի մի համակարգ. բացառություն է 10-րդ հատորը (որը անդրադառնում է պարսկական Աղբեջանի Ս. Ստեփանոս վանքին), ուր հիմնական շրջադարձ է կատարված դեպի Հյուբեման—Մեյե—Բենվենիստ համակարգը (էջ 17): Այս դեպքում լուծումը հստակ չէ: Այս հուշարձանի հիմնադրման և վաղ շրջանին վերաբերող պատմական տվյալները բավանալիս սակավ են. սակայն արձանագրությունների մեծ մասը կատարված է XVII դարում և ավելի ուշ: Իսկ այդ դարում հարավային տարածքում գերիշխում էր արևմտյան արտասանությունը: Դեռ ավելին, մի շարք ուխտավորներ պարսկական կամ թուրքական անուններ ունեին, որոնք ենթակա էին հնչյունական այլ մոտեցման (օրինակ՝ Աղաջան, Ալաջանի փոխարեն և այլն):

5, 3. Թեև «Revue des études Arméniennes» հանդեսը պահանջում է կիրառել ՀՄԲ գրադարձության համակարգը, բայց և այնպես արվեստի մասին հոդվածների նկարագրական մասում կամա թե ակամա ընդունվում է հանրամատչելի տառադարձության համակարգը: Վասպուրականի նահանգի հին հայկական եկեղեցիների ու վանքերի նկարագրությանը նվիրված հոդվածաշարում Մ. Թիերին կիրառում է տառադարձության փոփոխական համա-

կարգը (տե՛ս «Revue des études Arméniennes», տ. 4—10): Հեղինակը, նախապատվովություն տալով հանրամատչելի տառադարձությանը, ենթավերնագրերի համար դիմել է դրադարձված ձևերին, իսկ մարդկանց և սրբերի անունները տվել է ֆրանսերենով:

5, 4. Ս. Տեր-Ներսիսյանը, վերջերս հրատարակած «Հայկական արվեստ» շքեղ ալբոմում օգտագործել է հանրամատչելի տառադարձություն (որը հիմնված է անձնանունների և տեղանունների ժամանակակից արտասանության վրա), իսկ բիբլիական անունների համար՝ դրանց ֆրանսերեն տարբերակները: Նույն սկզբունքը հեղինակը կիրառել է իր «Հայեր» պատմական համառոտ ձեռնարկում:

6, 1. Այն տեղաշարժերից, որոնք սկիզբ են առել առաջին հազարամյակի վերջում և տարածվել են հայերեն ազգային լեզվի ամբողջ տարածքում, ամենաացայտունը եղել է հայերենի յ հնչույթի սղումը, որը բառասկզբում իրիսվել է հ-ի, իսկ բառավերջում լիովին կորցրել է իր ձայնեղությունը. ինչպես Յովհաննես—Հովհաննես, Յակոբ—Հակոբ: Ղ հնչույթը, որի տառադարձումը ամենից ավելի հակասական է, Հյուբլման—Մելե—Բենվենիստ համակարգում գրադարձված է լ-ով: Այս հնչույթը, որը եղել է քմային լ-ի ետքմային տարբերակը. պահպանել է իր հնչումը հայ ազգային լեզվի տարածքի մեծ մասում՝ մինչև խաչակիրների արշավանքները: Այսպես, օրինակ, այս տառը հանդիպում է խաչակիր ասպետների անուններում, ինչպես՝ Ռեյնոլդ, Բալդուին (հայերեն տառերով՝ Պալտին), որը գրվում է լ-ով: Սակայն, մյուս կողմից, երբ թուրքական վարձկան զինվորների անուններում արաբերենի ազդեցությունը թուլացավ, նույնիսկ արաբները սկսեցին օգտագործել այդ նշանը որպես ձայնեղ կոկորդային հնչյուն՝ արաբերենի դայնին համարժեք: Եթե որևէ մեկը գրադարձի ՀՄԲ-ի համակարգով այս ղ հնչույթը (1), ապա ոչ այսպես գետը հագիվ թե գրադարձված Albuğay Ժուր զլիսի ընկնի, որ դա Աղբուղա (Aqbūgha) անունն է, Alup կամ Ealup-ը Ակ Քոյունլու կառավարիչ Ռազուն Հասանի որդի Յակուբն է (Yakub, Yacob), կամ Էզիլ Seljuq էմիրը (1105—1118) համապատասխանում է Քիզիլին (Qizil), իսկ Ղիճ (Lidž)-ը նույնն է, ինչ Քլիճ Ասլանը (Ակ Քոյունլու կառավարիչ Զիհանգիրի հորեղբայրը): Խընդիրը ավելի է բարդանում, քանի որ հայ ազնվականությունը, հետևելով արեւելքի նորաձևությանը, որդեգրեց արևելյան անունները: Ինչպես օրինակ՝ Քուլթուբուղա հայերենով Լուխուպուղայ, որը արաբական «ղարիբ» տերմինն է (հայերեն խարիբ) և այլն: Այս դեպքում հնչյունական տեղաշարժ չի կատարվել, բայց քանի որ փոխառյալ բառում առկա է Ղ (ղ) հնչույթը, այն չի կարելի տառադարձել լ-ով: Այս անունները լավագույնս տառադարձելու համար բուն տեքստում պետք է տալ սկզբնական հնչյունային ձևը, իսկ հայերեն գրադարձությունը՝ հղումով նշել ցանկում:

6, 2. Անցման շրջանը՝ բաղաձայնների երկրորդ տեղաշարժը, աչքի է ընկնում կիլիկյան միջին հայերենի ուղղագրության մեջ տեղի ունեցող լուրջ բարդություններով: Հայկական պատմական տեքստերի տառադարձության համար անհրաժեշտ է օգտագործել երկու համակարգ, մեկը՝ մայր հայրենիքի, իսկ մյուսը՝ Կիլիկիայի համար: Սակայն, ինչպես տեսանք վերևում, այդ երկակիությունից կարելի է հնարամտորեն խուսափել, ինչպես վարվել է Ս. Տեր-Ներսիսյանը:

Բաղաձայնական երկրորդ տեղաշարժը տարածվեց ողջ Կիլիկիայում, սակայն այդ երևույթի նախադրյալները երևան էին եկել ավելի վաղ արաբական տիրապետության վերջում: Այնպես որ հաստատված էմիրությունների արաբական անունները հաճախ արտացոլում են հայերենի ուղղագրության հընչյունային տեղաշարժերը. օրինակ՝ Aplward, Aplbers, Apusa՝ Աբուվարդի, Աբու-Բարսի, Աբու-Սաջի փոխարեն: Թարգմանչի համար ճիշտ լուծումը կլինի իսկական արաբական ձևի վերականգնումը, փակագծերի մեջ ավելացնելով գրադարձված հայկական ձևը (հմմտ. Տեր-Ղևոնդյանի հիշյալ աշխատությունը՝ Ն. Գարսոյանի թարգմանությամբ):

6. 3. XIV—XVIII դարերը՝ պարսկա-թուրքական տիրապետության ժամանակաշրջանը, հայոց պատմության ամենամոռացվող շրջանն է, երբ հայ մշակույթը, գրականությունն ու արվեստը համարյա կանգ էին առել: Միայն վանական մի քանի կենտրոններում և Հայաստանի հեռավոր անկյունների մեծատաններում դեռևս այն շէջ մարել: Այս շրջանում կազմվեցին միայն հայկական մի քանի ժամանակագրություններ, իսկ հարյուրավոր ձեռագրերում կան պատմական արժեք ներկայացնող հիշատակարաններ (տե՛ս Լ. Խաչիկյանի կազմած և 1969 թ. Հարվարդի համալսարանի հրատարակած անգլերեն լեզվով «Հայկական ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուն):

Եթե նույնիսկ հայկական հատուկ անունները կարելի է գրադարձել և տառադարձել բնագրին համապատասխան, նույն բանը մահմեդական (արաբական, պարսկական և թուրքական) անունների նկատմամբ կիրառելիս շփոթություն կառաջացնի: Սկզբում այդ անունները վերադարձվում էին հայկական այբուբենով՝ ըստ իրենց կրիկյան (արևմտյան) հնչյութային-ուղղագրական համարժեքների: Այնպես որ XIV—XV դդ. օգտագործվում էին՝ Čanipek, Ֆիշտը՝ Ջանիբեկ (Janibek), Dinipek «Տինի-Բեգ»-ի փոխարեն (Էդգբեկի՝ Ոսկե Հորդալի խանի որդիները), Pirputax «Փիր Բուդակ»-ի փոխարեն (Ջիհան Շահ Կարա Քոչունլուի որդին), Pawlat İan «Բուլադ Խանի» փոխարեն, Pusait «Աբու-Սաիր»-ի փոխարեն (Կարա Յուսուֆ Ալ Քոչունլուի որդին): Մանջանի շատ օգտակար ժողովածուում ուղղագրական առանձնահատկությունները մեկնաբանված են պատմական տեքստում. կարելի էր բավարարվել դրանց հիշատակությամբ, որպես հայերենի ուղղագրական առանձնահատկություններ, տալով դրանք ցանկում, որտեղ, ի դեպ, տրված են բոլոր մահմեդական անունները՝ անհրաժեշտ պատմական տեղեկություններով:

6, 4. Ի՞նչն է պատճառը, որ արվեստի պատմությանը նվիրված աշխատություններում անձնանունների տառադարձությունը ավելի հաջող է, քան պատմական ուսումնասիրություններում: Նախ և առաջ, բավական թվով ամենատրեմատիվոր ճարտարապետական կոթողներ կառուցվել են Անդրկովկասում առաջին հազարամյակում, կամ Բագրատունիների իշխանության օրոք՝ Անդրկովկասի վերածննդի շրջանում: Արևելյան տարածքում դասական գրադարձության համակարգը (բացի ղ-ի և յ-ի հնչյունական փոփոխությունից) համապատասխանում էր ավանդական դրական արտասանությանը, այնպես որ գրադարձության և արտասանության միջև եղած անջրպետը բավականին նեղ էր: Սելջուկ-թաթարական արշավանքներից, ինչպես նաև պարսկական-օսմանյան տիրապետությունից հետո հայկական մշակույթի վերելքը կանգ առավ մինչև XIX դարը:

7. Ամփոփելով հայերենի տառադարձության հարցում մեր բացահայտած դժվարությունները, պետք է նշել, որ հիմնական պրոբլեմը այն է, որ պատմական զարգացման ընթացքում դասական շրջանի հայերենի հնչյութային համակարգը ենթարկվել է փոփոխությունների. ըստ որում, եթե գրական լեզվի պահպանողականության հետևանքով ՀՄԲ գրադարձության համակարգը, աննշան տարբերություններով, կիրառելի է մայր երկրի գրական հուշարձանների անունները տառադարձելիս, ապա գրական այն աշխատությունների համար, որոնք ստեղծվել են հարավային տարածքում, որտեղ գերիշխում էր կրիկյան (արևմտյան) արտասանությունը, խորհուրդ է տրվում օգտագործել էկլեկտիկ (խառը) տառադարձությունը՝ հայկական անունները տալ կամ արևելյան կամ արևմտյան տառադարձությամբ, իսկ օտար անուններն ու տերմինները գերադասելի է տալ ըստ իրենց ազգային լեզվի տառադարձության (փակագծի մեջ կարելի է տալ նաև հայկական գրադարձությունը և կամ նշել ու հղել այն ցանկում):

8. Հայ պատմության, մշակույթի, գրականության և արվեստի ակնարկներում նպատակահարմար է օգտագործել հատուկ անունների (անձնանուններ-

րի և տեղանունների) հնչյունական (գիտամատչելի) տառադարձությունը՝ համապատասխան լեզվին հարմարեցված (օգտագործելով տառակապակցություններ), որը կհեշտացնի պատմական տեքստի ընթերցումը, կդարձնի այն աներկմիտ և հաճուրդ կալատճառի ընթերցողների լայն շրջաններին։ Այս համակարգը բացառում է սխալ արտասանությունը կամ հավանական թյուր մեկնաբանումը։ Այսպիսի գիտահանրամատչելի տառադարձության աղյուսակ են կազմել Ս. Տեր-Ներսեսյանը («Հայերը», էջ 85) և Ռ. Թումսոնը՝ Ազաթանգեղոսի թարգմանության մեջ (էջ XIX)։

Ինչ վերաբերում է քրիստոնեական ծագում ունեցող անձանուններին, ամենագործնական մեթոդը համապատասխան լեզվի տարբերակի կիրառումն է։

Այսպիսով՝ գիտական տեքստերի տառադարձման հարցում անհրաժեշտ է կիրառել զիֆերենցված մոտեցում՝ նկատի առնելով երկու գրական հայերենների հնչյութային տարբերությունները և փոխառյալ անունների ու տեղանունների հնչյութային առանձնահատկությունները՝ մի կողմից, և տվյալ տեքստի գործնական ուղղվածությունը՝ մյուս կողմից։

ТРАНСКРИПЦИЯ И ТРАНСЛИТЕРАЦИЯ В ТРУДАХ ПО ИСТОРИИ И ИСКУССТВУ АРМЕНИИ

ЭДМОНД ШЮТЦ (Будапешт)

(Резюме)

При переводе армянских текстов на другой язык лингвисты последовательно применяют систему транслитерации собственных имен и терминов, разработанную Гюбшманом—Мейе—Бенвенистом (ГМБ). Индоевропейцы отстаивают ее действительность при передаче всех видов научных текстов, аргументируя следующим образом: 1) фонетическое значение знаков этой системы более или менее адекватно соответствует произношению литературного языка; 2) с помощью простой таблицы соответствия имен и термины с иностранного языка легко можно перетранскрибировать в соответствующие имена и термины армянского языка; 3) журнал *Revue des Études Arméniennes* рекомендует применять эту систему в публикуемых в нем статьях.

Однако, несмотря на все эти преимущества, использование источников с разными транскрипциями нарушает принцип последовательности и единообразия транслитерации. И не случайно, например, что при передаче арабских и вообще мусульманских имен ученые большей частью придерживаются орфографии «Энциклопедии ислама». Помимо неудобств, связанных с применением научной транслитерации в текстах, предназначенных для широкого читателя, незнакомого с диакритиками и знаками этой системы, при выборе между транскрипцией и транслитерацией возникает вопрос историзма. Основная трудность при этом заключается в несоответствии между фонетической системой классического армянского языка и системой языка Киликийского царства.

Наибольшие трудности причиняет транскрипция *q* через *l*. Звук *l* еще во времена крестоносцев был твердым эквивалентом сонанта *l*, но во времена падения арабского владычества эта буква передавала также звонкий фриктивный звук в турецких и арабских словах, соответствующий арабскому айну. Поэтому в текстах по истории и искусству применение системы ГМБ вызывает двусмысленность. Целесообразнее при передаче иностранных имен и терминов применять транскрипцию в соответствии с языком оригинала, т. е. употреблять смешанную (эклетиическую) систему транслитерации-транскрипции.